«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինչպես զարգացնել ստեղծագործական ունակությունները մայրենի առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսան Ուզունյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ. 175 միջն. դպրոց

Երևան 2023

Թեման՝ Ինչպես զարգացնել ստեղծագործական ունակությունները մայրենի առարկայի դասավանդման ընթացքում

Հարցը՝

- Ի՞նչ է ստեղծագործությունն ու ստեղծագործական ունակությունը և ինչպե՞ս զարգացնել երեխայի մեջ ստեղծագործական ունակությունները մայրենի առարկայի դասավանդման ընթացքում:

Բովանդակություն

1.Թեմա----------2

2.Բովանդակություն----------3

3.Ներածություն----------4

4.Գլուխ 1 Ի՞նչ է ստեղծագործությունը----------5

5.Գլուխ 2 Ստեղծագործական ունակությունների հնարները----------8

6.Եզրակացություն----------16

7.Գրականության ցանկ----------17

]

Ներածություն

Ստեղծագործությունն ինքնաարտահայտման ակտիվ ձև է: Ստեղծագործական միտքը բաղկացած է բոլորովին նոր բան հորինելու, հնարելու ունակությունից, աշխարհահայացքի ճկունությունից, գործընթաց, որի արդյունքը բոլորովին նոր պատկերների ստեղծումն է:

Ես ընտրեցի այս թեման, որպեսզի ցույց տամ, թե ի՞նչ է իրենից ներկայացնում ստեղծագործությունն ու ստեղծագործական ունակությունը, և թե ինչպե՞ս և ինչ ուղիներով երեխայի մեջ զարգացնել այդ ունակությունները:

Նպատակները՝

1. Փորձել բացատրել, թե իրենից ինչ է ներկայացնում ստեղծագործական ունակություններն ու երևակայությունները:

2. Մայրենիի դասին զարգացնել երեխաների ստեղծագործական ունակություններն ու երևակայությունները:

Երեխաներն ունեն տեսնելու, մտածելու և

զգալու իրենց սեփական ձևը

(Ժ.Ժ.Ռուսո)

Գլուխ 1

Ի՞նչ է ստեղծագործությունը

Տարրական կրթության հիմնական նպատակներից մեկը երեխաների ստեղծագործական երևակայության զարգացումն է:

<<Ստեղծագործական կարողություններ>> ենթաբաղադրիչը նպատակ ունի զարգացնել սովորողի ստեղծագործական ունակություններն ու երևակայությունը, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները, դրսևորել ստեղծագործական երևակայություն, երևակայել, խորհել և այլն: Այս դրույթն ամրագրված է չափորոշչում: Ստեղծագործությունն ինքնաարտահայտման ակտիվ ձև է: Ավելին, ինքնաարտահայտումը կարող է իրականացվել ցանկացած բանի միջոցով՝ բառ կամ շարժում, նկար կամ քանդակ, բանաստեղծություն կամ մեղեդի:

Ստեղծագործական միտքը բաղկացած է բոլորովին նոր բան հորինելու, հնարելու ունակությունից, աշխարհահայացքի ճկունությունից, գործընթաց, որի արդյունքը բոլորովին նոր պատկերների ստեղծումն է:

Տարրական դպրոցը բարենպաստ ժամանակահատված է ցանկացած ունակությունների զարգացման համար՝ ներառյալ ստեղծագործական:

Այս տարիքում երեխաներն ավելի հետաքրքրասեր են և բաց են շրջապատող աշխարհի գիտելիքների համար և նրանց մտածելակերպը անկախ է և չի սահմանափակվում ընդհանուր ընդունված կարծրատիպերով: Դասավանդման ընթացքում ուսուցչի օգտագործած ոչ ստանդարտ հնարներն աշակերտներին կմղեն երևակայելու ձեռք բերած գիտելիքներն ստեղծագործաբար կիրառելու: Շատ հարմար է ստեղծագործական ունակությունները զարգացնել մայրենի առարկայի դասավանդման ընթացքում:

Երևակայության աստիճանները

Երևակայության ակտիվության չորս աստիճան կա.

- Ամենացածր ակտիվությունն արտահայտվում է քնի մեջ, երբ ընկալումը կախված չէ մարդու գիտակցական ցանկություններից:

- Ավելի ակտիվ աստիճան դրսևորվում է հաճելի երազների մեջ:

- Երևակայությունն առավել ակտիվ է ընթերցանության, գրական ստեղծագործությունների կամ երաժշտություն ունկնդրելու ժամանակ, երբ պատկերները ստեղծվում են լսողական ընկալման կամ բանավոր նկարագրության հիման վրա:

-Երևակայության ամենաբարձր աստիճանը գիտակցվում է ստեղծագործական գործունեության մեջ:

Աշխատելով կրտսեր տարիքի երեխաների հետ՝ համոզվել ենք, երբ նրանց տրվում են ինչ որ նոր ու անսովոր առաջադրանքներ, նրանք դառնում են նպատակամետ և ստեղծագործող: Ուստի մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցչի օգտագործած ոչ ստանդարտ հնարներն աշակերտներին կմղեն երևակայելու, ձեռք բերած գիտելիքներն ստեղծագործաբար կիրառելու: Այդ հնարներից մեկն էլ հեքիաթների ու հեքիաթային պատմությունների ստեղծումն է:

Խթանման փուլում ուսուցիչն օգտագործում է <<Գուշակի՛ր, թե ո՞վ է մեր հյուրը>>հնարը:

Ուսուցիչը տիկնիկ մարդուկին վերցնելով, փոխված ձայնով ասում է.

-Բարև՛, սիրելի՛ աշակերտներ, ես ժողովրդական բանահյուսության ամենատարածված ու սիրելի նմուշներից եմ: Ես ծնվել եմ ամենավաղ ժամանակներում և դարերի միջով, սերնդից սերունդ փոխանցելով՝ հասել եմ մինչև ձեր օրերը: Ես սիրում եմ թափառել, ճամփորդել, լինում եմ տարբեր ժողովուրդների մոտ: Ինձ սիրում են և՛ մեծերը, և՛ փոքրերը, որովհետև ես շատ հետաքրքիր եմ ու գրավիչ: Ես գովաբանում եմ բարին, ազնիվը, փառաբանում եմ խաղաղ ու ստեղծագործ աշխատանք, սակայն խարազանում եմ չարը, ագահությունը, խորամանկությունը, ծուլությունը: Ես հայտնի եմ և՛ մարդկանց, և՛ կենդանիներին, և՛ բույսերին, որովհետև ես կախարդական եմ, երբեմն էլ հրաշքներ եմ գործում: Ինձ

պատմում են, երգում, բեմադրում են, կարդում նաև գրում են: Ճիշտն ասած,սիրելի՛ փոքրիկներ, ինքս էլ չգիտեմ՝ <<ես լինում եմ, թե չեմ լինում>>:

Ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե ճանաչեցի՞ն արդյոք տիկնիկ մարդուկին, ո՞վ է նա: Երեխաները հրճվանքով գուշակում են, որ իրենց հյուրը հեքիաթն է: Այնուհետև հեքիաթ մարդուկը հարցեր է տալիս աշակերտներին.

-Ի՞նչ հեքիաթներ գիտեք և ի՞նչ հեքիաթ եք կարդացել: Ո՞ր հեքիաթն է ձեզ շատ դուր եկել և այլն:

Այս երկխոսությունից հետո աշակերտներն ուսուցչի հրահանգով բացում են դասագրքերը և կարդում փոքրիկ տղայի հղումը:

<<Պապիկը, որը չէր կարողանում հեքիաթ պատմել>> (3-րդ դասարան)

Դասագրքի 3-րդ հարցը.

<<Պապիկի պատմած հեքիաթի ո՞ր մասը քեզ դուր եկավ: Շարունակիր՝ հորինելով նոր ավարտ>> ստեղծագործական տիպ է, որը հնարավորություն կտա աշակերտներին երևակայելու, զարգացնելու ունակությունները:

Գլուխ 2

Ստեղծագործական ունակությունների հնարները

Ներկայացնենք մի քանի ստեղծագործական հնարներ.

- Երկանդամություն՝ ստեղծագործական երևակայության միջոցով (Ջ.Ռոդարի հնարները)
- Նետված քարը
- Ճանապարհորդություն
- Առարկաների երևույթների նոր որակների հայտնաբերում
- Երևակայական երևույթներ
- Հնար՝ եթե…
- Հեքիաթի շարունակում
- Հայտնի հեքիաթի մշակում՝ նոր տարրի ներմուծումով
- Փրկարար իրավիճակներ

Դիտարկենք այդ հնարներից յուրաքանչյուրը:

<u>Երկանդամություն՝ ստեղծագործական երևակայության միջոցով-</u> Սովորողներին առաջադրվում է երկու առարկա կամ բառ, որոնց միջև թերևս չի կարող լինել տրամաբանական որևէ կապ: Երևակայության միջոցով այդ երկանդամության ստեղծումն էլ հենց բացահայտում է ստեղծագործական ուժի էությունը: Բառերը դուրս են բերվում իրենց նախնական իմաստային դաշտից: Դրանք կորցնում են իրենց իրական նշանակությունը և սկզբնական իմաստային կապերի համակարգը:

Այդ կերպ բառերի ներառումը միևնույն համատեքստում ենթադրում է մտքի թռիչք և անսահման երևակայություն: Օր. Առյուծ և սեղան:

<u>Նետված քար-</u>Փորձարկվող է համարվում ցանկացած բառ, որը ջրի մեջ նետված քարի նման, երեխաների մեջ արթնացնում է մտքերի տարափ և հիշողությունների

ալիք: Դրանք կարող են ծառայել որպես արժեքավոր նյութ՝ շարադրություն գրելու, հեքիաթ կամ պատմություն հորինելու համար:

Գրողները երբեմն ուզում են հորինել հեքիաթ կամ պատմվածք, և հանկարծ նրանց գլխում ոչ մի թեմա չի ծագում:

Այդ ժամանակ նրանք վերևից ներքև գրում են ընդամենը մեկ բառ՝ տառը տառի հետևից: Յուրաքանչյուրի կողքին ավելացնում են ցանկացած բառ որն սկսվում է այդ տառով: Օգտագործելով տվյալ բառերը՝ նրանք հորինում են հեքիաթ կամ պատմություն: Իսկ այն բառերը, որոնք չեն օգտագործվում, ջնջում են: Ստացվում է անչափ հետաքրքրաշարժ պատմություններ

Հեքիաթ գրչի մասին	Հեքիաթ բաժակի մասին
գրամ **ր**ոպե **ի**նքնուրույն **չ**ղջիկ	**բ**ամբակ **ա**րև **ժ**ամացույց **ա**նտառ **կ**աղամբ

<u>Ճանապարհորդություն-</u> Կազմակերպվում է մտովի ճանապարհորդություն դեպի որևէ հեքիաթի սյուժե: Քննարկման ընթացքում պետք է ընդունել մի շարք կանոններ, վերցնել մի քանի անհրաժեշտ առարկաներ, մտածել արգելքներ և դրանց հաղթահարման ուղիները: Այսպես <<ճանապարհորդելով>>՝ աշակերտը հեշտությամբ է շարադրում հեքիաթը:

Ուշագրավ է <<Ճանապարհորդություն դեպի Ավստրալիա>> (օդապարիկով խաղ - միջառարկայական կապ <<Ես և շրջակա աշխարհը>>):

Թղթի կամ գրատախտակի վրա ուսուցիչը նկարում է մեծ օդապարիկ: Աշակերտները պետք է հավաքեն ճանապարհի համար անհրաժեշտ իրեր (օդապարիկի վրա գրել

անվանումները):

Առարկաների նոր որակներ, հերոսների նոր հատկանիշներ-Նոր հեքիաթային սյուժեի հերոսները կարող են լինել ցանկացած առարկա, օբյեկտ, հերոս եթե նրան վերագրում են դրանց ոչ հատուկ որակներ (<<Ապակե մարդուկը>>, <<՝Երկաթե փիսիկը>> և այլն):

- **Ծանոթ հերոսներ՝ նոր իրավիճակում**
- Օրինակ՝ աղվեսն ու նապաստակը բնակվում են թռչող ափսեներում կամ աղվեսը, նապաստակը և աքաղաղը կախարդական փայտիկի օգնությամբ հայտնվել են կենդանաբանական այգու մի վանդակում կամ բազմահարկ շենքի վերելակում:
- **Տարբեր հեքիաթներից կազմված կոլաժ**

  Նպատակահարմար է այս հնարը երեխաներին հաղորդել խաղային իրավիճակում, <<Ձեր տանը հավանաբար կա հեքիաթի գիրք: Ահա թե ինչ պատահեց մի օր այդ գրքի հետ: Այնտեղ խառնվեցին բոլոր էջերը: Քաջ Նազարը հայտնվեց անտառում, որտեղով անցնում էր Կարմիր Գլխարկը, իսկ Պոչատ աղվեսը հայտնվեց Վիննի Թուխի կողքին…>>: Շարունակությունը պետք է հորինեն երեխաները:
- **Իրավիճակի փոփոխում ծանոթ հեքիաթներում**

  Ոսկե ձկնիկը ցանկանում է անձամբ հանդիպել պառավի հետ:
- **Հեքիաթի վերափոխված տարբերակ**

Աշակերտներին առաջարկվում է հերոսներին վերագրել այլ որակներ (Օրինակ՝ յոթ ուլիկները դառնում են կատաղած ու համառ և փախչում անտառ, իսկ բարի գայլն օգնում է այծին գտնելու նրանց):

- **Հեքիաթ աղբից**

  Ձմռանը Աղբն ապստամբել էր: Ձանձրալի ու տխուր է ձմռան ցրտին ընկած մնալ ասֆալտին: Եվ ասֆալտի բնակիչները որոշում են օգնել միմյանց, դատարկ տուփերը դառնում են բեմ, գունավոր թղթերը՝ մարդուկներ, թեփերը՝ մարդուկների մազեր… ու սկսվում է բեմականացումը:

Երևակայական երևույթներ

Երևակայական երևույթներն ու իրավիճակները խիստ կարևոր են հեքիաթի շարադրման համար: Հարկավոր է հավաստիացնել երեխաներին, որ նրանք կարող են երևակայել ու գտնել այդ պահը:

Ասենք, կարելի է առաջադրել այսպիսի իրավիճակ.

-Պատկերացրե՛ք, որ դուք կարող եք փոքրանալ ու դառնալ մրջյունի չափ: Ո՞րը կլինի ձեր սիրած զբաղմունքը: Այդ դեպքում ինչի՞ց կզգուշանայիք դուք: Կցանկանայիր դառնալ նախկինի նման:

<u>Եթե...</u>

Աշակերտն իրեն կամ մեկ ուրիշի տեղափոխում է իրականից երևակայական իրավիճակ և փորձում առաջադրված իրավիճակներն իմաստավորել և հորինել պատմվածք: Օրինակ <<Եթե ես ունենայի կախարդական փայտիկ. . . >>, <<՝Եթե ես ունենայի ժամանակի մեքենա…>> և այլն:

Հայտնի հեքիաթի վերամշակում՝ նոր տարրերի ներմուծումով

Այս հնարը հնարավորություն է ընձեռում զարգացնել երեխաների երևակայությունը, սովորեցնում է յուրօրինակ մոտեցում ցուցաբերել այդ նոր և անսպասելի տարրին, ներմուծել այն համատեքստ և հաստատել իմաստային կապը: Ծանոթ հեքիաթից առաջադրել բառեր կամ նկարներ: Շարքի չհամապատասխանող բառը կնկալվի որպես ավելորդ:

Փրկարար իրավիճակներ

Ուսուցիչն ներկայացնում է ծայրահեղ սուր իրավիճակներ, որոնք պահանջում են դրանց լուծման ամենաբազմազան տարբերակներ:

<<Մի անգամ նապաստակը որոշեց լողալ: Ու լողաց նա ափից շատ հեռու: Հանկարծ սկսվեց փոթորիկ, և նա սկսեց խեղդվել…>>:

-Նապաստակի փրկության համար առաջարկեք տարբերակներ:

Կարող են տարբերակներ առաջարկել նաև կամակոր այծերի համար: Ինչ կանի նազիրն արթնանալուց հետո (՝<<Խնդուկ-Խնդմնդուկ>> 2-րդ դասարան՝ մայրենի):

Անկասկած այս հնարը ամենաանհավանական սյուժեների և ավարտների հորինման հրաշալի նախապայման է: Երեխաները սովորում են ելքեր գտնել դժվարալուծելի իրավիճակներից զարկ տալով երևակայական ունակություններին:

Գծել հեքիաթի սկզբից,վերջում ավելացնել սովորածը:

Գ	Ու	Ս
Բարին հաղթում է չարին	Ինչպես են ստեղծվում հեքիաթները	Կարող եմ շարունակել կիսատ հեքիաթը: Կարող եմ մեկ բառի հուշումով հեքիաթ ստեղծել:

Ստեղծագործական մտքի զարգացումը կարելի է տանել, եթե նրանց մասնակից ես դարձնում հեքիաթում կատարվող իրադարձություններին, այլ կերպ բեմադրում են, էլ ավելի հարազատ է դառնում հեքիաթը, էլ ավելի է զարգանում երևակայական աշխարհը, երբ ներկայացնում են տիկնիկներով: Այսպիսի վառ օրինակ ունենք մենք դասարանում:

Ներկայացրել եմ ստեղծագործությունս <<՝Թե ինչու վարդը փշեր ունեցավ>>: Այնուհետև ընտրել եմ համապատասխան դերակատարներին: Տիկնիկների պատրաստմանը մասնակից եմ դարձրել նաև ծնողներին՝ ապահովելով դպրոց-ծնող կապը, որի արդյունքում ունեցել ենք գեղեցիկ ներկայացում: Երեխաները հասկացան, թե ինչու են մարդիկ հանկարծ փոխում իրենց վերաբերմունքը դեպի վատը, որ դա կարող է ծնվել մի անզգույշ խոսքից, շարժումից և այլն և որ ամենակարևորը պետք է զգալ սխալը ու ներողություն խնդրել: Ներկայացնում եմ հատվածներ ներկայացումից, թե ինչպես փոքրիկ աղջիկը դարձավ վարդ ու հայտնվեց պարտեզում:

Բոլորը ուշադիր էին նրա նկատմամբ, սիրալիր էին, գովքն էին անում, հատկապես թիթեռներն ու մեղուները, ինչից էլ չարացան պարտեզի մի խումբ ծաղիկներ:

Թե ինչու վարդը փշեր ունեցավ:

Ծաղիկները ներողություն էին խնդրում իրենց վատ պահվածքի համար

Ուսուցիչը իր օրինակով սեր արթնացրեց աշակերտների մոտ դեպի ստեղծագործությունը, հարստացրեց նրանց երևակայական աշխարհը,ձևավորեց մտածական հմտությունները: Երբեմն մեծերիս օգնությունը պետք է լինի աննկատ և ոչ պարտադրված, չհուշել այն բաները որ նա ինքնուրույն էլ կգուշակի:

Կան բազմաթիվ վարժություններ և խաղեր ևս, որոնք ուղղված են երեխաների ունակությունների զարգացմանը:

Որպեսզի դասերն ունենան դրական ազդեցություն, և երեխաները կանոնների մեջ չշփոթվեն, բավական է ընտրել մի խաղ և վարժություն՝ աստիճանաբար բարդացնելով:

Մայրենիից <<Մայրիկի ծաղիկը>> դասն անցնելուց առաջ հայտորոշել, թե ինչ գիտեն ծաղիկների մասին: Վեր կհիշեն ստեղծագործության՝ <<Թե ինչու վարդը փշեր ունեցավ>> հերոսներին: Կնկարագրեն ծաղիկներին, փշոտ վարդին, հիրիկին,խատուտիկին…

Քանի որ ստեղծագործության մեջ յուրաքանչյուր ծաղիկ ներկայացնում էր իր բուժիչ լինելը, աշակերտները կնշեն, որ բոլոր ծաղիկները դեղաբույսեր են: Դասն անցնելուց հետո նրանց մոտ կձևավորվի, որ ծաղիկները չի կարելի արմատախիլ անել, որպեսզի չոչնչանան, չվերանան:

Հանձնարարվեց յուրաքանչյուր աշակերտի գրել հանելուկ նախընտրած ծաղկի մասին, իսկ վերջում բոլոր հանելուկները իրենց նկարներով ուսուցչուհու օգնությամբ դարձավ հանելուկների գիրք:

Ահա թե ինչպես զարգացրեցինք ստեղծագործական ունակությունները մայրենիի դասաժամին:

Երեխաները պետք է բարելավեն իրենց ստեղծագործական ունակություններն այնքան, որքան անհրաժեշտ է մտավոր կամ ֆիզիկական զարգացման համար: Եվ նույնիսկ, եթե երեխան հետագայում հայտնի արվեստագետ կամ դերասան չդառնա, նա ձեռք կբերի ստեղծագործական մոտեցում՝ կյանքի ցանկացած խնդիր լուծելու համար:

Երեխան դառնում է հետաքրքիր անհատականություն իր վառ գույներով, ունենում է գեղարվեստական ճաշակ, անկաշկանդ հաղորդակցվելու հմտություն:

Եզրակացություն

Կարևորելով սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական ունակությունների զարգացումը հատկապես մայրենի դասաժամին, եկա այն եզրակացության, որ յուրաքանչյուր երեխա ցանկացած խնդրի լուծման համար պետք է իր ներդրումն ունենա, իր ստեղծագործական մոտեցումը: Այսպես առարկան ավելի հետաքրքիր է դառնում, ավելի գունեղ, ավելի սպասված: Սպասված՝ նորի ստեղծումով, իրեն անմիջապես մասնակից դարձնելով:

Քանի որ բոլոր երեխաները հեքիաթներ, հանելուկներ շատ են սիրում, ուստի էլ ավելի է սիրելի դառնում, երբ ինքը ևս մասնակից է լինում այդ ստեղծագործությանը՝

- Հորինում են ավարտը
- Բեմադրում են
- Տեղերով փոխում են հերոսներին
- Ընտրում են նոր վերնագիր

Երեխաները դառնում են ինքնաբավ: Կկարողանան ցանկացած դժվարություն կյանքում հեշտությամբ հաղթահարել:

Գրականության ցանկ

1. Կարինե Չիբուխչյան <<Ստեղծագործական կարողությունների զարգացման ուղղությամբ կատարվող աշխատանքները տարրական դասարաններում>>: Նախաշավիղ, Երևան 2011թ

2. Կարինե Թորոսյան,Կարինե Չիբուխչյան, Վաչագան Սարգսյան <<Մայրենի 3>> մեթոդական ձեռնարկ: Երևան 2008թ

3. Հոգեբան Միլս Բակովսկայա <<Ստեղծագործական մտածողության զարգացում>>: